ՆՈՐ-ԴԱՐ

№ 32 ՅԱՍՆԱՐՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 26 Փետրուարի 1897 Ուրբաթ 26 Փետրուարի ՅԱՍՆԱՐՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 32

Տարեկան 10 բուբլի, վեց ամիսը՝ 6 բուբլի, երեք ամիսը՝ 3 բ. 50 կ. ամիսը՝ 1 բ., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Дары" կամ Tiflis Rédaction „Nor-Dar".

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 3-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են տասն լեզուներով Յայտարարութիւնների գինը 3 կ., բոլշևիկների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Պատգամաւորների ժողովի այսօրուայ նիստը։

Ընդհանուր ռեֆորմների ծրագիրը։

Անցքերը Կրետէում։

Ռուսաց կառավարութեան հաղորդագրութիւնը Կրետէի խնդրի վերաբերմամբ։

Կ. Պոլսի հայ թերթերից։

Քրոնիկոն—Լուրեր։

Մամուլի շուրջը։

Բ ա ն ա ս իրատ ա կ ա ն. Կրետէի շուրջը։

«Նոր-Դար»-ի պատասխանները։

Տ ե ղ ե կ ա տ ո ւ։

Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր։

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԱՑՕՐՈՒԱՑ ՆԻՍՏԸ

(«Նոր-Դար»-ի թղթակից-աշխատակցից)

—

Արտաքին գործերի մինիստր Արեւելեան խնդրի վերաբերմամբ իրեն ուղղած հարցապնդումներին խուսափողական պատասխան այնպես տալ չկարողանալով, ստիպուեցաւ ընդունել, որ վիճաբանութիւնը տեղի ունենայ այսօր։

Ամեն ոք անհանգիստ էր։ Նոյնիսկ կառավարութեան անդամները յայտնի երկիւղի մէջ էին։

Ուսանողները չորս-հինգ օրից ի վեր շարունակ ցոյցեր են անում, ժողովուրդը դժգոհ է։ Լուր էր տարածուած, որ նիստի օրը գործաւորների և ուսանողների մի ահագին բազմութիւն Բուլբոնեան պալատի առաջը հակակառավարական ցոյց պիտի կատարէ։ Տարածուած լուրը ստուգութիւնից զուրկ չէր, ուստի ոստիկանապետը ոստիկանների մի հսկ բազմութիւն էր գումարել պատգամաւորների ժողովի շինութեան առաջ, Սէն Ժերմենի բուլվարից, մինչև Ջէ-դ'Օրսէյի միւս ծայրը։ Օտար, անծանօթ դէմք Բուլբոնների պալատի առաջ կանգնել իսկ չէր կարողանում։

Դեռ ժամի մէկից սկսած տոմսակ ունեցող այցելուները, պատգամաւորները, սենատի անդամները և լրագրողները կամաց կամաց սկսում են մտնել։ Ձեմելասրահը զօրքով բռնուած է։

Գ. Բրիսսոնը, փոխ-նախագահները յետևից, ծանրաքայլ ներս է մտնում։ Զօրքերը ողջոյնի են կանգնում։ Զօրքերի մի մասը ներս է մտնում իրենց յատկացրած տեղերը։ Ձեմելասրահը կոքճ ժամանակից յետոյ լցւում է ահագին բազմութեամբ։ Ամենքն էլ վիճում են։ Ոմանք պատապարում են յոյներին, ոմանք պախարակում են սուլթանին, բայց ամենքը խօսում են կրքոտ, յուզուած կերպով։

Լրագրողների յատկացեալ վերնատունը բարձրանալու համար «ապիտակ թուղթ» պիտի ցոյց տալ, ինչպէս ասում են Ֆրանսերէն։ Զորս տեղ տոմսակ են պահանջում։

Օթեակները, վերնայարկերը լի են։ Տաճկաց դեսպան Միւնիր բէյը չկայ, եկած է նրա խորհրդական Միսսակ էֆէնդին։ Պետութեանց ներկայացուցիչներն էլ ժխանքի մէջ են։ Գալի նուագիան ամենքի ուշադրութիւնը իր վրայ է գարձրել։

Ընկերվարականները փոքրիկ խմբեր կազմած, յուզուած վիճաբանում են։ Արմատականներն աչքերը այս ու այն կողմն են գարձրած, կեդրոնը ծանր, բայց բերանը բաց, սպասում է ձայնի, որ աշխարի պէս հետևի։ Ամէն խրոխտ դիրք ունի։

Ժամը 2½ ին պ. Բրիսսոնը կարդում է օրակարգը, ամբիոն է բարձրանում պ. Գոշէնը ձեռքին «Դեղին Գիրք»-ը և ուսանողական մանաժողովի Հայաստանի գանազան տեղերից ստացած հայերէն նամակները և նրանց թարգմանութիւնները։ Ծրարը սեղանի վրայ գնելուց յետոյ պ. Գոշէնը սկսում է խօսել, այս անգամ նոյեմբերի 3-ի հանդարտութիւնը չունէր, պ. Գոշէնը աւելի քան յուզուած էր։ Ծափահարութիւն, հաւանութիւն առանում էր անխրտիր բոլոր կուսակցութիւններից։ «Դեղին Գիրք»-ի վերլուծութիւնն անելով երբ հարցրեց թէ Ցրապիզոնի հիւպատոսի տեղեկագիրն ինչու համար հրատարակուած չէ, այդ ժամանակ պ. Հանոտոյի «բարդախութիւնը» դուրս եկաւ, և սկսեց պատճառաբանել, որ այդ տեղեկագիրը պահուած էր տեղական պէտքերի համար։ Գիսատ-պուտտ տեղեկագրերի համար պ. Հանոտոյի գլխին հայհոյանք էր որ թափւում էր, մանաւանդ ընկերվարականների կողմից։ Գ. Ժորէսը կանգնած, երեսը պ. մինիստրին գարձրած, տեղն եկած ամեն խօսքի համար մի-մի «յանդիմանութիւն» էր ուղղում։ Գ. Հանոտոն գլխակոր դրութեան մէջ էր։ Գլուխը կախ թողած, միայն պ. Մէլինն էր իր «թագման լրջութիւնը» անխախտ պահած։

Երբէք չէի տեսած պ. Գոշէնին այդքան յուզուած և այդքան ճարտարախօս։ Տպաւորութիւնը մեծ էր և յոյս կար յաջողութեան։

Գ. Միլլերանը իր քննադատութիւնն ուղղեց դէպի պետութեանց փոխադարձ յարաբերութիւնը։ Քննադատութիւնը կծու էր։

Նոյեմբերի 3 ին պ. Հանոտոն պատգամաւորների ժողովի մէջ կարդաց մի հեռագիր, որով, իբրև թէ, պ. Կամբոնը իմաց էր տալիս, թէ Մահզար բէյը արդէն գինուորական առանձին է յանձնուած։ Գ. Միլլերանը նոյն «Դեղին Գրքի»-ի տեղեկագրերի վրայ հիմնուած ցոյց տուեց, որ Մահզար բէյի դառը դեռ նոյեմբերի 16 ին սկսուած չէր, ինչպէս որ երևում էր նոյն պ. Կամբոնի զեկուցագրից։ Գ. Հանոտոն պարզ կերպով սուտ էր խօսել։ Այդ ժամանակ ոչ թէ ծիծաղ, հայհոյանքի տարափ տեղաց նոր Ռիշլէօի գլխին։ Այդքան մարդի առջև փաստերով ապացուցւում է, որ մինիստրը սուտ է խօսել։ Վերնայարկերից, մանաւանդ լրագրողները, այնպիսի մի ազմուկ, այնպիսի բացականչութիւններ արձակեցին, որ պ. Բրիսսոնը իզուր չարունակ զանգահարում էր, լսողն ոչ էր։ Անցաւ փոթորիկը։ Գ. Միլլերանը իր ճառը շատ երկարացրեց. մէջտեղի մասում շատ թոյլ էր։ Վերջաբանը յուզեց։

Գ. Հանոտոն ընդհանուր ծիծաղի մէջ ամբիոն բարձրացաւ։ Ճառը գրել էր։ Ընկերվարականները, վերնայարկերի արմատական և ընկերվարական լրագրողները կանչում են «մի թէ՛թ մոռացել հա»։ Ծիծաղը, հրհոցը ստիպում է պ. Հանոտոյին ձեռքերը ծալել և կանգ առնել—«Լսէք պ. մինիստրին», զանգահարում, կանչում է պ. Բրիսսոնը։ Լսողն ոչ է։

Գ Հանոտոն կարդում է ճառի առաջին մասը ընդհանուր ծիծաղով է անցնում։ Երբ հասաւ այն կոսրին, թէ «Դուք ասում էք ինչու համար թուրքաց դէմ այժ չգանեցրիք», այն ժամանակ ծիծաղի, հրհոցի մի սոսկալի ոլոտում տեղի ունեցաւ, որովհետև այդպիսի խօսք ոչ ոք չէր ասել։ Գ. Հանոտոն առաջուց իր ճառը գրել էր կարծելով թէ այդպիսի բան կարող են ասել, բայց որովհետև չէին ասել, նոյն իսկ սպասուրի կերպարանք ունեցող պ. Մէլինը ծիծաղեց։

Փակագծի մէջ մի նման դէպք յիշեմ։ Սրանից մօտ երկու տարի առաջ Լոնդոնում հայոց ընթերցարանի մէջ ս. Վարդանանց ժողն էին ժողում։ Սկսեցաւ ճառախօսութիւնը։ Պոլսեցի մի ճառախօս առաջուց իր ճառը գրել էր և անգիր արել։ Արտասանած մէջ տեղին յանկարծ սկսեց գոռալ. «Թողէք ձեր ծափահարութիւնները, թողէք ձեր բրաւոները», բայց աչքի առաջ ունեցէք, որ ոչ ծափահարող էր եղել և ոչ էլ բրաւօ ասող։ Ճառախօսը կարծելով թէ այդպես ինքը ծափահարութիւն և բրաւօ պիտի ստանար, առաջուց այնպէս էլ գրել էր։ Պոլսեցին անվրդով կերպով չարունակեց իր փոխն ասել։ Ձիշտ նոյնը արաւ և պ. Հանոտոն։ Երբ «յուշարար, յուշարար» աղաղակեցին, ոմանք էլ ասում (տակառ—այդպէս են կոչում պ.Հանոտոյին), այն ժամանակ պ. Հանոտոն մինչև ականջները կարմրած չարունակաց ու ձախ էր նայում. «Թողէք, որ չարունակեմ, որ մէկիկ պատասխանեմ»։ Մէջին և վերջին մասի մէջ պ.Հանոտոն երևեցաւ մի խորամանկ քաղաքագէտ, որ չեղած դէպքերի պատկեր առաջ բերելով, տպաւորութիւն է գործում իր ունկնդիրների վրայ և ապա իրեն ներկայացնում իբրև միակ յարմարապոյնը երևակայեալ դժուարութիւնները հարթելու։ Նոր Ռիշլէօն Միտտերնիխի խորամանկութիւն ցոյց տուեց և մի քիչ էլ կորով։ Այդ ժամանակ ոչխարաբոյծ կեարոնը, ձախակողմեանները, նոյն իսկ աջակողմեանները չարունակ ծափահարում էին, ընկերվարականները լուռ, իրարու երես էին նայում։

Գ. Հանոտոն մի մարտակոչ արձակեց։ «Միայն չպէտք է քանդել, հարկաւոր է շինել։ Արդ, իւր սիստէմին, իւր քաղաքականութեան հակառակ մի նոր բնչ սիստէմ, բնչ քաղաքականութիւն են առաջարկում իւր հակառակորդները»։

Այդ մարտակոչը ոչ ոք չկարողացաւ վեր առնել։ Եւ այդ րոպէից երևեցաւ, որ Ռիշլէոն յաղթութիւնը պիտի տանի, մինչդեռ առաջին նշանները հակառակն էին ցոյց տալիս։

Երբ պ. Հանոտոն վար իջաւ, աջ, կեարոն, ձախ ոգևորուած ծափահարում էին։

Ամբիոն բարձրացաւ պ. Ժորէսը։ Կեարոնի մեծ մասը ականջները խցելու համար դուրս եկաւ։ Ուզում էին, որ վիճաբանութիւնը յետաձգուի։ Գ. Ժորէսը իւր ճառի առաջին մասը գրեթէ ընդհանուր անտարբերութեան մէջ արտասանեց։ Վերջը կամաց կամաց սկսեց բռնկիլ։ Իւր ճառի մէջին և վերջին մասի մէջ պ. Ժորէսը աքանչելի էր, բայց ճարտարախօսութիւնը, փաստերի կուտակումը ինչ անի կոճղացած սրտերի առաջ։

Կառավարութիւնը յաղթող հանդիսացաւ, պատճառ բերելով եւրոպական ներդաշնակութիւնը, պետութեանց ներկայ դիրքը, և պատերազմի երկիւղը, խոստում տալով, որ Հայաստանի մէջ բարենորոգումներ կըմտցնուեն և կրետէն գէթ ինքնավար կըդառնայ։

Ս. Մապահ-Դիւրեան.

Պարիզ, 22 փետր. (Ն. ա.)։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԵՖՈՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

—

«New-York Herald»-ը պնդում է, թէ չնայելով, որ դեսպանների խորհրդակցութիւնը խիստ գաղտնի կերպով է կատարւում, այնուամենայնիւ Գ. Պոլսում իմացել են, թէ ինչումն է կայանում նրանց մշակած ընդհանուր ռեֆորմների ծրագիրը։ Ծրագրի գլխաւոր կէտերը, նրա ասելով, հետևեալներն են.

1) Մեծ վեզիրը նշանակւում է պետութիւնների ընդհանուր համաձայնութեամբ։

2) Ֆինանսների մինիստրը նշանակւում է եւրոպացիներից։

3) Արդարադատութեան մինիստրը նշանակւում է նոյնպէս եւրոպացիներից։

4) Մի առանձին վերահսկիչ յանձնաժողով է նշանակւում հսկելու համար թրքական վարչական գանազան հաստատութեանց գործունէութիւններին։

5) Ռեֆորմների գործադրութեան համար փոխառութիւն պիտի լինի պետութիւնների երաշխաւորութեամբ։

ԱՆՑՔԵՐԸ ԿՐԵՏԷՒՄ

—

«Eclair» լրագրի թղթակիցը Կանէում խօսակցութիւն է ունեցել գնդապետ Վասոսի հետ, որն ասել է նրան, թէ Կրետէի միացումը Յունաստանի հետ միակ միջոցն է Կրետէի խնդրի լուծման։ Հակառակ դիպուածում չեն կարող Յունաստանին ստիպել, որ նա իւր զօրքերը յետս կոչի կղզուց։ Թղթակիցն այցելել է նմանապէս ապստամբների բանակը, որտեղ ասել են նրան, թէ առայժմ իրենք կարող են զսպել իրենց թշնամական գործողութիւնները չկատարելու, բայց յոյները չեն կարում, որ վաղ թէ ուշ Կրետէն պիտի միացնեն Յունաստանի հետ։ Ապստամբներից շատերը թղթակցին ցոյց են տուել իրենց դաշոյնները, որոնց վրայ փորագրուած են հետևեալ բառերը. «Միացումն Յունաստանի հետ կամ մահ»։

—200 կամաւոր զինուորներ, գլխաւորապէս իտալացիներ, ափ են իջել Կրետէ։

—Գ. Պոլսից գրում են «Temps»-ին, որ յունաց ազգային մանաժողովը գիմել է բոլոր երկրների հարուստ յոյներին օգնութեան և նրանք, արդէն ուղարկել են 65 միլիոն ֆրանկ։ Աւելի քան 40,000 հոգի միացել են մանաժողովի հետ և տուել են 10 միլիոն ֆրանկ։ Զանազան երկրներում յայտնի դիրք ունեցող ուրիշ յոյներ խոստացել են խոշոր գումարներ ուղարկել հէնց որ կռիւն սկսուի։

—«Daily News»-ն իրեն լուր հաղորդում է, որ Ռուսիան Գերմանիայի հետ առաջարկել է պետութիւններին սուլթանից պահանջել, որ նա լիազորութիւն տայ միացնել Եւրոպային Գրետէն խաղաղեցնելու և կղզուն ինքնավարութիւն տալու այն պայմանով, որ օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը, այսինքն սուլթանի անուանական գերիշխանութիւնը պահպանուի։ Պետութիւններն ընդունել են այդ առաջարկը, և Թիւրքիան իւր կողմից համաձայնութիւն է տուել իրեն արուած հաւաքական պահանջին։ Ասում են, թէ Եւրոպան ինքնավար Կրետէի ընդհանուր-նահանգապետի պաշտօնի համար ի նկատի ունի բարոն Կալլային, որին նոյն պաշտօնը յանձնելու մասին խօսում էին երկու տարի առաջ նաև Հայաստանի համար։ Ինչպէս լսում է, այս ծրագրի նախաձեռնութիւնը, որ պէտք է հաշտեցնէ Բելգրնի և Լոնդոնի կաբինետներին յունական խնդրում, պատկանում է գրաֆ Ռոլուխովսկուն։

—Լոնդոնի յունաց դեսպանը յայտարարում է, թէ սուտ է այն տեղեկութիւնը, որ Գէորգ Թագաւորն իրբ թէ համաձայնում է պետութիւնների առաջարկին։

—«Berliner Tageblatt»-ի ասելով, սուլթանը ոչինչ չի պատասխանել պետութիւնների առաջարկին Կրետէին ինքնավարութիւն տալու։ Դրան և դեսպանների միջև յարաբերութիւնները լարուած են։

—«Fremdenblatt»-ի ասելով, Անգլիան ընդունել է աւստրիա-ռուս-գերմանական առաջարկութիւնը Կրետէի խնդրի վերաբերմամբ։

—Զմիւռնիայում յոյներն անկարգութիւններ են յարուցել։

—Հնագրական նորագոյն տեղեկութիւններից երևում է, որ Գ. Պոլսի դեսպանները Դրանն արդէն ներկայացրել են իրենց յայտագիրը Կրետէի վերաբերմամբ։ Այդ յայտագրի մէջ նրանք ասում են թէ խաղաղութիւնը և Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը պահպանելու նպատակով պետութիւններն անհրաժեշտ են ճանաչում թողնել օգոստոսի 13-ի ռեֆորմների ծրագիրը և Կրետէին աւելի ընդարձակ ինքնավարութիւն տալ։ Նմանապէս պահանջում են, որ թրքական և յունական զօրքերը յետս կոչուն կղզուց։ Դեսպանները ստացել են Դրան պատասխանը, որով նա համաձայնութիւն է յայտնում յայտագրի բովանդակութեանը և յոյս ունի, որ Կրետէին ինքնավարութիւն շնորհելու վերաբերմամբ առանձին համաձայնութիւն կըկայանայ իւր և մեծ պետութիւնների միջև։

—Աթէնքից հեռագրում են, որ յունաց լրագրերի թղթակիցները ստիպուած են հեռանալ Կանէից, որովհետև Կրետէ ափ իջած միջազգային զօրախմբերի հրամանատարը հաղորդել է նրանց, թէ ի նկատի ունենալով ստեղծուած դաշակրգերի սպառնալիքները, ինքը չի կարող երաշխաւոր լինել նրանց կեանքի համար։

—«Times»-ին Աթէնքից հեռագրում են. «Կրետէի հարաւային ափերը բաւարար չափով պաշարուած չինելու պատճառով «Ափֆտերիան» և ուրիշ նաւեր ուեհատի մէջերը են ափ իջեցրել անարգել կերպով։ Ցոյն զինուորները լեռներով զօրքերին ուեհատի պաշար են հասցրել, որ 3 ամիս բաւական կլինի։ Սելինոյում այժմ գտնւում է 7 նաւ, որոնք հարկաւոր դէպքում կարող են 700 հոգի ափ իջեցնել։ Ինչպէս լրանում է, ապստամբները մասամբ հեռացել են Ակրոտիրայից և ծովով ուղևորուել են դէպի Ապոկորոն»։

—Կանէից հեռագրում են, որ յունաց հիւպատոսը, Վասոսի բանակից վերադառնալով պատասխան է բերել ծովակալներին հաղորդելու Թուրքի դէ-

ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՎԵՐՋԱՊԵՍ ԼՈՒԾՎԱԾ ՉԵՆ

ԼՈՒՐԵՐ

Ամերիկահայ գրչակներէն մէկուն ուղղած նամակէն կ՚արտագրենք հետեւեալ տողերը, որոնք կը վերաբերին հայ գրականութեան ներկայ վիճակին.

«Ինչո՞ւ հայ գրականութիւնը այսքան ետ մնացած է միւս ազգերու գրականութիւններէն։ Ինչո՞ւ մեր գրականութիւնը չունի ո՛չ Շէյքսփիր, ո՛չ Կէօթէ, ո՛չ Տանթէ, ո՛չ Հիւկօ, ո՛չ Տիքընզ, ո՛չ Թոլսթոյ, ո՛չ Տուրկենև, ո՛չ Պուշքին, ո՛չ Լերմոնտով, ո՛չ Կոգոլ, ո՛չ Պալզաք, ո՛չ Տիւմա, ո՛չ Վիքթոր Հիւկօ, ո՛չ Տանթէ, ո՛չ Պոքաչչօ, ո՛չ Մոլիէր, ո՛չ Ռասին, ո՛չ Կորնէյ, ո՛չ Վոլթէր, ո՛չ Ռուսսօ, ո՛չ Պոտլէր, ո՛չ Վերլէն, ո՛չ Ռեմպօ, ո՛չ Մալարմէ, ո՛չ Վերհարն, ո՛չ Մէթերլինք, ո՛չ Իպսէն, ո՛չ Պիոռնսըն, ո՛չ Պէրնարտ Շօ, ո՛չ Ուայլտ, ո՛չ Սուինպըրն, ո՛չ Քիփլինկ, ո՛չ Հարտի, ո՛չ Ուէլս, ո՛չ Ճէք Լընտըն, ո՛չ Ֆէնիմոր Քուփըր, ո՛չ Էտկար Փօ, ո՛չ Ուոլթ Ուիթմըն, ո՛չ Էմերսըն, ո՛չ Ուաշինկթըն Իրվինկ, ո՛չ Հոուըրն, ո՛չ Ուիտիր, ո՛չ Ուիլքինսըն Քոլինզ, ո՛չ Ուիլքի Քոլինզ, ո՛չ Ռիտըր Հէկկատ, ո՛չ Ռիտըր Հակկատ, ո՛չ Ռիտըր Հակկատ, ո՛չ Ռիտըր Հակ

Ի մի խօսքով վիպասի գիտէր ամէն ինչ, ինչ որ հարկաւոր է վիպասանի համար, եւ ինչ որ չգիտէր, կարդալով կը սորվէր։

Ասոնց հետ միասին ան ունէր նաեւ ուրիշ առաւելութիւններ, որոնք ամէնքն ալ չունէին։ Ան ունէր ուժեղ երեւակայութիւն, որ կը ստեղծագործէ, կը հնարէ, կը գտնէ նոր դէպքեր, նոր կերպարներ, նոր տիպեր։ Ան ունէր ուժեղ զգացմունքներ, որոնք կը ստիպեն մարդը գրելու, որոնք կը ստիպեն մարդը ստեղծագործելու։ Ան ունէր ուժեղ կամք, որ կը ստիպէ մարդը աշխատելու, որ կը ստիպէ մարդը ստեղծագործելու։

Ասոնք ամէնքն ալ ունէր Ֆլոբեր։ Ասոնք ամէնքն ալ ունէր Ալֆոնս Տոդէ։ Ասոնք ամէնքն ալ ունէր Էմիլ Զոլա։ Ասոնք ամէնքն ալ ունէր Գի դը Մոփասան։ Ասոնք ամէնքն ալ ունէր Ռուսիոյ մեծագոյն վիպասանները։

Ասոնք ամէնքն ալ ունէին ուրիշ առաւելութիւններ, որոնք չունէին ուրիշները։ Ասոնք ամէնքն ալ ունէին ուրիշ առաւելութիւններ, որոնք չունէին ուրիշները։ Ասոնք ամէնքն ալ ունէին ուրիշ առաւելութիւններ, որոնք չունէին ուրիշ

անում զանազան բարենպատակ հաստատութիւններին։ Դա մի ուրախալի երևոյթ է և ցանկալի է, որ ունենայ իւր հետևողները։

ԲԱԳՈՒԻՑ. –Փետրուարի 20-ին տեղի ունեցաւ տարեկան ողջունական հայկական երեկոյթը «Մարզասիրական ընկերութեան» զրադարանի օգտին, ժողովարանի պահլճում։ Ներկայացուեցաւ մի վոդեվիլ և այնուհետև կոնցերտ։ դաւն Գոնցերտին մասնակցում էր Պարիզից նոր վերադարձած օպերդ Պապայեանը, որ իւ միջի այլոց, երգեց «Արաքսի արտասուքը»։ Այնուհետև բաւական չնորհալի կենդանի պատկերներ ներկայացուեցան։ Եւրոպական և ասիական պարերը տևեցին մինչև առաւօտ։ Ցամակները մի չաթաթ առաջ արդէն սպառուած էին։ Դահլիճում երկու տեղ չկիր կիօսկներ էին չինուած, ուր քաղցրաւէնիք էին վաճառում։ Մուտքը 3000 րուբլուց անց է։

ՄԱՄՈՒԼԻ ԾՈՒՐԸԸ

Թրքահայ գաղթականների օգտին ասացուող նուիրատուութիւնները բաշխելու նպատակով, Կ. Ն. Ռէյտերի նախագահութեան տակ Թիֆլիսում յանձնաժողով կազմուելուն առթիւ «Կռւկազ» լրագիրը մի երկար յօդուածով խօսում է այն մասին, թէ ինչպէս պիտի օգնել գաղթականներին։ Այս ղէպքում յանձնաժողովի գլխաւոր նպատակը պիտի լինի «ճշտիւ որոշել Թիֆլիս ապաստանած հայ փախստականների թիւը և բաժանել նրանց կարգերի, համաձայն իրենց կարիքի, համաձայն իրենց արհեստների, իրենց առողջութեան և այն բանի, թէ որքան ժամանակ պիտի մնան նրանք այստեղ»։

Որովհետև ճշտիւ յայտնի չէ. թէ հայ գաղթականների թիւը Թիֆլիսում իսկապէս որքան է, այդ պատճառով «Կռւկազը» վերցնում է մօտաւոր թիւ—800 հոգի։ Այդ ութ հարիւր հոգուն օգնելու համար «բաւական խոշոր գումար» է հարկաւոր։ Հետևաբար ինքն ըստ ինքեան երկու խնդիր է ծագում. առաջինը—ապահովել հանգանակութիւնը գաղթականների օգտին և երկրորդը—որոշ աշխատանք տալ նրանց։

«Կռւկազը» կոչում է անում օգնելու հայ գաղթականներին.

> *Թիֆլիսում, օրինակ, այս րոպէիս կը գտնուի 2,000 հոգի, որոնք, առանց իրենց բարօրութեանը մնասելու.կարող էին տոկել 25.ական րուբլի, իսկ այդ չէ որ 50,000 րուբլի կրկազմէը... Մի՛թէ բարի ցանկութիւն կը պակասի այդպիսի մի հասարակ գործ կատարելու համար...*

Բացի անմիջական բարեգործութիւնից, կայ օգնութեան ուրիշ մի ձև—կարիք ունեցողին աշխատանք տալը։ Մրտեղ պէտք է աշխատանք գտնեն թրքահայ գաղթականները։

> *Նրանցից մօտաւորապէս 25%-ը մանր արհեստաւորներ կամ վաճառականներ են, որոնց մի մասը, գուցէ, արդէն պաշտօն են գտել իրենց մասնելի տեղերում. կարելի է մինչև անգամ հաւատացած լինել այդ բանին, ի նկատի ունենալով այն համակրանքը, որ նրանք այստեղ ստանում են ընդհանրապէս։ Բայց ինչ պիտի անի մնացած 75%-ը, որ բաղկացած է երկրագործներից։*

«Կռւկազը»-ը երևիլ է կրում, թէ մի գուցէ թրքահայ գաղթականներին ցոյց տրուած համակրանքը վնասի ինչպէս Թիֆլիսի մշտական բանուորների, այնպէս և Անդրկովկասի զանազան կողմերից և հիւսիսային Կռւկասից եկող ազգքաղ մարդկանց չհանրին, որոնք գալիս են մշակութիւն անելու Թիֆլիսում։ Սկզբունքով «Կռւկազը» իրաւամբ բնական է համարում, որ իրենց հայրենիքում երկրագործութեամբ պարապող գաղթականներն այստեղ էլ նոյն պարապմունքն ունենան, բայց նա վախենում է, որ այդ բանը դժուար իրագործելի է, որովհետև դրա համար պահանջւում է երկրագործութեան հարկաւոր պարագաներն ու անասունները ձեռք բերել և հայ գաղթականներին ուղղի կամ պակաս երկար ժամանակ բնակեցնել այստեղ—մի բան, որ նրանց մշտական բնակութեան նախապատրաստելը կը լինէր, իսկ այդ բանը «Կռւկազը» «Մոյլասարկին» չի համարում։

Սակայն, վերջնական բնակութիւնը,—շատ խելացի կերպով նկատում է «Կռւկազ»-ը,—նոյն իսկ իրենց գաղթականների համար էլ ցանկալի չէ. գոնէ պ. Ռէյտերի մօտ մօտերքս եղած մասնաւոր խորհրդակցութեան մէջ հեղինակաւոր անձինք առում էին, որ գաղթականները ևրպտում են վերադառնալու իրենց թրքական աւերակները։

Այս պատճառով մենք լիովին համամիտ ենք «Կռւկազ»-ի հետ, որ ամենանպատակայարմար օգնութիւնն այն կլինի, որ թրքահայ գաղթականներին միջոց տրուի իրենց հայրենիքը վերադառնալու։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԴԱՆՁԱԿ, պ. Նուխ։ Դանձակի մեր մի թղթակցի գէմ մեզ ուղղուած Ձեր պատասխանը չենք հրատարակիլ։

Այդ անպատկառ լեզուով և այդ հոգուով գրած անվայել գրութիւնը կարող էք տալ տալ այն թերթում, որին Դուք թղթակցում էք։

Եթէ վայելուչ լեզուով գրուած լինէր Ձեր պատասխանը, դարձեալ չպիտի կարողանայինք հրատարակել, որովհետև չէք գրում թէ Դուք ով էք։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Խոնարհաբար խնդրում եմ զեռեղել պատուական «Նոր-Դար»-ի էջերում հետեւեալը.

Սալիանի հայոց աղօթատան տեղանի համար, շամախեցի նաղլբանդի սահակ Ագասի-բէկ Պապալեանցից ստացանք 3 արշին երկարութեամբ և 2½ արշին լայնութեամբ մի ծածկոց, որ պատրաստուած է մետաքսեայ կտորից և զարդարուած 3 հատ չղարչի խաչերով։ Այդ չքեղ ծածկոցը, պ. Պապալեանցի ամուսին հանգուցեալ Մարիամ Պապալեանցի դիազարդն էր։

Ըստ Սալիանում հայ ժողովրդեան յանձնարարութեամբ անսահման շնորհակալութիւն ենք յայտնում մեծապատիւ Պապալեանցին։

Ց. Իզմիրլեան

Սալիան.

Գ. Հ. Բար. Ընկ. Խորհուրդը յայտնում է իւ գիտութիւն Ընկերութեան անդամների, որ մարտի 2 ին, կիւրակէ, երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիսի Դումայի գահլիճում նշանակուած է Ընկերութեան անդամների Ընդհանուր ժողով, որի պարապմունքի առարկաները լինելու են 1) Ընկերութեան 1897 թուի ընդհանուր, այն է, կենդրոնի և 18 ճիւղերի նախահաշիւների քննութիւնը և հաստատութիւնը. և 2) Պաշտօնատար անձանց ընտրութիւնը, այն է – Ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի, Խորհրդի 4 անդամի և 2 փոխանդամի, վերաստուգող յանձնաժողովի 3 անդամի և գրադ. մասնաժողովի 5 անդամների։

Ընկերութեան անդամները հրաւիրւում են վերանորոգելու իրենց անդամակցութիւնը, դիմելով ընկ. գրասենեակ, Սերգիևսկայա փողոց, № 15, ս. Ալիխանովի։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

որ շարունակ 15 տարի վարել է հայոց պլորոցներում վարժուհու և ասպ-վարժուհու պաշտօն, այժմ որոշում է հայոց լեզուի և թուաբանութեան դասեր ձեռնտու պայմաններով։ Հասցէն իմանալ «Նոր-Դար»-ի խմբագրատանից։ 5—1

Առաջիկայ մարտի 2-ին, հրաւիրւում են ԿՈՒԿՈՒՈՑ-ՆՈՐԱՇԷՆ եկեղեցու ծխականները առաւօտեան ժամի 11-ին լթէ հին երեցփոխանի տաշիները պնակու և լթէ նոր երեսփոխան և երեք տաշտատուներ ընտրելու։ Ժողովը լինելու է նոյն եկեղեցու Ուսումնարանի դահլիճում։

Գործակալ Ղ. ա. ք. Խարազեանց.

(725) 2—1

ՖԵՆԻՔՍ-ՕՐԳԱՆՆԵՐ

Մեխանիքական երաժշտական գործիքներ, որոնք նուագում են ձեռքի պտտումով։

Մետալական նոտեր։ Պոպպատի ձայներ։ Հնդիւն եղանակ։ Ծարմար են պարերի համար։

ՕՐԳԱՆ-ԻՆՏՈՆ—16 եղանակ. գինը առանց նոտերի 10 ռ., նոտերը 35-ական կոպ.

ՖԵՆԻՔՍ-ՕՐԳԱՆ—24 եղանակ. գինը առանց նոտերի 26 ռ., նոտերը 60-ական կոպ.

ՕՐԿԵՍՏՐ-ՖԵՆԻՔՍ—48 եղանակ (երկձայն), գինը առանց նոտերի 40 ռ., նոտերը 60-ական կոպ.

ՑԻՆԳՈՒ-ՀՈՒՐԱՆՑՆԵՐԸ—2ՐՒ։

Գնելիս դրամական է առնում արժէքի ⅓ մասը, մնացածն առնում է վերադիր վճարով ուղարկուած ժամանակ։

ՅՈՒԼԻՈՍ ՀԵՆՐԻՒ ՅԻՄՄԵՐՄԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ

գլխաւոր պահեստ և գործարան։

Նոտերի պահեստ։

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Բ. Մարսկայա, 34 և 40

ՄՈՍԿՈՒԱ, Կուզնեցկի մ., տ. Զախարինի։

702 2-2. 30 - 11

Ա. ԳԵՆԿԷ ԵՒ ԸՆԿ.

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԻՐԵՐ

Москва, Пассажъ Солодовникова.

Входъ съ Неглинной

ԱՄԵՆ ԻՆՉ

Գահկարասի, բրոնզ, դաշնամուր, հայելիներ սեղր, ժակոր և այլն և այլն։

Վիակատար կարգուսարք

(М.) № 224 12—4

„ՀԻԴԻՆԳ“ ԸՆԿ.

ՄԱՏՐԱՔԱՂԱՔԻ ՕՃԱՌ

Հանելի ժամանցնով տուն, առատ նուրբ ժաւատ փրփուր։

Իւրաքանչիւր կտորի վրայ երկու մայրաքաղաքների 4 նկար կայ։

ՎԱՃԱՌՈՒՄ Է ԱՄԵՆ ՏԵՂ

Գլխաւոր պահեստները. СПБ. Изощ. Александр. театр, 9. МОСКВА, ВАРШАВА.

М. № 11311 2—18

ԲԱԳՈՒ ՔԱՂԱՔՈՒՄ

ՍՏՐԳԻՆԿՈՒԻ ՎԱՃԱՌՈՒՏՈՒՆ

ՎԷՐԵՐ

ԿՐԻՉԱՑԻ ՓՈՂՈՑ ՎՐԱՑ

Ունի բազմատեսակ ժողովածու։

717 10—6

ՆՈՒՐ ԲԱՑՈՒԱԾ ԱՀԱԳՈՐԱՑՈՒԹԻՒՆ

Պ. Ֆ. „ՍՏԱՆԻՍԼԱՒ“

ՎԱՐԴԱՒԱՅԱՏՈՒՄ

Էլեկտրալինեայա փողոցի վրայ, № 20, երկրորդ յարկում, պ. Ֆրանզ գործարանի կարգում։ Առաջարկում է մեծ բնտրութիւն արտասահմանեան և տեղական կահկարասիք։ Պահեստում գտնւում է սեղանատան, նստարանի, առանձնասենեակի, դաշինքների և այլ սենեակների համար կահկարասիք, նաև հայելիներ, ջահեր, բազմատեսակ աշտանակներ, զարգեր, դռան և պատուհանների վարագոյրներ—չափաւոր գներով։ Պ.պ. վիճաւորականների համար 5% զեղչ։ Ֆիրման երաշխաւորում է իւ բանքի դիմացկութիւնը։

(М.) № 11500 12—5

Новое ФРАНЦУЗСКОЕ PEЧЕНІЕ

С. СІУ и К°

PETIT BEURRE

МОСКВА

С. СІУ и К°

(М.)

ՇՆՈՐՀԻ

Թէյի համար մեր պատրաստած ֆրանսիական պաքսիմատների բարձր յատկութեան

ՄԵՆՔ ԸՐՔԱՆՉԱՑԱԾ ԵՆՔ

այն բանին, որ ուրիշները մեր պաքսիմատներ

ՃՇՏԻՒ

ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒՄ ԵՆ

ԽՈՒՍԱՓԵՆՔ

ՏՑԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ուշադրութիւն դարձնելով մեր ճիշտ յայտնի

С. СІУ и К°

24—10

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՆԱՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

ա) Յայտնում է որ հանդուցեալ Տիկին Նատէ Զամբարեան առաջին մրցանակին, 400-ր. համաձայն որոշման առանձին մատնուած գումի արժանացաւ պ. Առաքել Մնացականեանը «Ուսի և Ուսուիչի» հեղինակը, 1894 թ. Դէկտեմբեր ընթացաւարտ։

բ.) Յայտարարում է իւ գիտութիւն որոց կրնայ պարտիլ, թարգման Մահեան Ստեփան Զամբարեանցի ամուսին հանդուցեալ Նատէ Զամբարեանցի հետևեալ ուսերաւոլթեան և նորա պայմանների մասին, որոնք արած են 28 օգոստոսի 1891 ամի։

«Ցանկանալով յարգարել Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դպրոցի և Էջմիածնի հոգևոր ճեմարանի սաներին ուսուցիչ եղող պարոնների պրակտիկական ասպարիզում և միևնոյն ժամանակ վարձատրելով նրանց պրակտիկական առաջին աշխատութիւնները Կովկասի և Փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան, պրակտիկայի և ազգութեան ուսումնասիրութեան վերաբերեալ, յարդելի Հոգաբարձութիւնից խնդրում եմ ընդունել յօգուտ Ներսիսեան հոգևոր դպրոցի նուիրատուութեան 1000 րուբլի 4% արժեկղթերով և գործադրել հետևեալ կերպով։ 1) Իմ նուէրը պիտի լինի անձեռնմխելի մայր գումար, գումարից գոյանալիք %%-ից, որ չորս տարուց կը հասնի մօտ հարիւր րուբլի, ամեն չորս տարին մի անգամ պիտի տրուի կամ մրցանակ առաջինը մօտ չորս հարիւր րուբլի և կրկրորդը հարիւր րուբլի, որպէս վարձատրութիւն ամենայն աշխատութիւնների գրուած հայկական լեզուով Կովկասի, Փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան, պրակտիկայի և ազգութեան մասին։ 2) Մրցանակաբաշխութեան մասնակցելու իրաւունք ունի Ներսիսեան հոգևոր դպրոցի և ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի այն բոլոր աւարտած սաներին, որոնք իրանց ուսումն աւարտել են մրցանակաբաշխութեան օրից ոչ աւելի առաջ քան հինգ տարի։ Մրցանակները տրւում են առանձին մասնախմբից, բաղկացած հինգ հոգուց, որոնց ընտրում է Ներսիսեան հոգևոր դպրոցի ուսուցչական ընդհանուր ժողովը իր միջից և մասնաւոր անձերից։ Որպէս կանոն իրաւունք եմ տալիս, յայտնում եմ կարծիքս, որ գոնէ երկու անդամները միշտ պարտին մասնաւոր հետևակատար անձերից»։

Ցիշեալ պայմանների հիման վրայ, առաջին մրցանակաբաշխութիւնը հանդուցեալ Զամբարեանցի լինելու է 1899 թ. սեպտեմբերին հետևեալ կերպով։

1) Հետևակատարութիւնները պէտք է ուղարկուին Ներսիսեան դպրոցի Հոգաբարձութեանը, ոչ ուշ քան 1-ն սեպտեմբերի 1899 ամի։

2) Հետևակատարութիւնները պէտք է ունենան խորագիր, իսկ հետևեալ անունը պէտք է նշանակած լինի փակ ծրարի մէջ, նոյն խորագրի տակ որպիսի ծրարը բացուելու է միայն մրցանակաբաշխութեան որոշուած ժամուց յետոյ։

3) Մրցանակաբաշխութեան հարցը որոշուելու յետոյ, հետևակատարները կարելի է յետ առնել կամ անձամբ, կամ հաւատարմագրեալ անձանց միջոցով։

4) Մրցանակի արժանացած չարադրութիւնների, նոցա հետևակատարների և տարած պրեմիայի քանակութեան մասին կը հրատարակուի լրագրներում։

(731) 3—1.

ՆՈՒՐ ԲԱՑՈՒԱԾ ԱՀԱԳՈՐԱՑՈՒԹԻՒՆ

Պ. Ֆ. „ՍՏԱՆԻՍԼԱՒ“

ՎԱՐԴԱՒԱՅԱՏՈՒՄ

Էլեկտրալինեայա փողոցի վրայ, № 20, երկրորդ յարկում, պ. Ֆրանզ գործարանի կարգում։ Առաջարկում է մեծ բնտրութիւն արտասահմանեան և տեղական կահկարասիք։ Պահեստում գտնւում է սեղանատան, նստարանի, առանձնասենեակի, դաշինքների և այլ սենեակների համար կահկարասիք, նաև հայելիներ, ջահեր, բազմատեսակ աշտանակներ, զարգեր, դռան և պատուհանների վարագոյրներ—չափաւոր գներով։ Պ.պ. վիճաւորականների համար 5% զեղչ։ Ֆիրման երաշխաւորում է իւ բանքի դիմացկութիւնը։

(М.) № 11500 12—5

Дозв. цензурою Тифлисъ 25-го Февраля 1897 г. Տպարան Ն. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А.О.Меликъ-Шахназаріанца, Головинскій просп. домъ Рейтеръ.